ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, JOURNALISM, ЖУРНАЛИСТИКА

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ՝ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1988-1991թթ.) *

ՀՏԴ 070:(054):94(4/9) *DOI: 10.52063/25792652-2025.1.24-180*

ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ
Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի
նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anna.mkrtichyan555@gmail.com
ORCID: 0009-0005-7469-9912

Հոդվածի նպատակն է ներկայացնել խորհրդային վերջին տարիներին հայաստանյան մամուլի հրապարակումների բովանդակային առաջնահերթությունները, լրագրողական աշխատանքի առանձնահատկությունները, մամուլի դերն ընթերցողներին համախմբելու, գաղափարական դաշտ ձևավորելու գործում՝ Ղարաբաղյան շարժման օրինակով: Ղարաբաղյան հիմնահարցի ներկայիս իրողությունն ու ստեղծված իրավիճակը ստիպում են ուսումնասիրել խնդրի ակունքները՝ հետազոտության նյութ դարձնելով այդ շրջանի մամուլը, քանզի համազգային հիմնահարցերը բարձրաձայնվում էին ոչ միայն հրապարակներում և դահլիճներում, այլև՝ ժամանակի մամուլում: Չնայած խորհրդային տարիներին հայաստանյան մամուլը հնարավորություն չուներ լիարժեք և օբյեկտիվորեն ներկայացնելու իրականությունը՝ գործող գրաքննությամբ պայմանավորված:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները. մամուլի հրապարակումների հիման վրա ուսումնասիրել և նորովի մեկնաբանել Ղարաբաղյան շարժման, համազգային գոյամարտի և ԼՂՀ ստեղծման նախադրյալները, լուսաբանման առանձնահատկությունները, նաև՝ անկախ մամուլի ծնունդը: Մի շարք հրապարակումներ, ըստ էության, առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում:

Աշխատանքը շարադրվել է վերլուծության, պատմաքննական և պատմահամեմատական մեթոդների, նաև լրագրագիտական վերլուծության սկզբունքների կիրառմամբ:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ Ղարաբաղյան շարժումը, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումը, Խորհրդային Միության փլուզումը, պարտադրված պատերազմը բարենպաստ պայմաններ չէին հայաստանյան լրատվադաշտի համար: Չնայած ստեղծված իրավիճակին՝ մամուլը, փորձելով հաղթահարել մասնագիտական բազմաթիվ մարտահրավերներ, ուղղված էր Ղարաբաղյան շարժմանը և կարևոր

* Հոդվածը ներկայացվել է 05.02.2025թ., գրախոսվել՝ 20.02.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

դերակատարում ուներ հանրությանը համախմբելու, արժեքային դաշտ ձևավորելու գործում:

Հիմնաբառեր՝ *մամուլ, հայաստանյան մամուլ, Ղարաբաղ, Ղարաբաղյան շարժում, Արցախ, Ղարաբաղի հիմնախնդիր, պայքար, ապատեղեկատվություն, ազատ մամուլ:*

Նախաբան

1985թ. ապրիլից ԽՍՀՄ-ում հռչակվել էր երկրի արմատական բարեփոխմանն ուղղված նոր քաղաքական ուղեգիծ, որը բնորոշվում էր «վերակառուցում», «հրապարակայնություն», «ժողովրդավարացում» դրույթներով: Լայն առումով այս եռամիասնությունը ներառում էր բազմաթիվ հիմնահարցեր: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հրապարակայնության քաղաքականության նկատմամբ հավատի սասանումը սկսվեց 1988թ. փետրվարյան հանրահավաքներից՝ նաև մամուլում տեղ գտած ոչ համարժեք տեղեկատվության, ավելի ճիշտ՝ ապատեղեկատվության պատճառով: 1988-1991թթ. հայաստանյան մամուլն ուղղված էր Ղարաբաղյան շարժմանը՝ իր բոլոր դրսևորումներով: Ցանկացած ոլորտի առնչվող հրապարակում տարբեր թելերով կապվում էր Ղարաբաղին: Այդ առումով հարկ է առանձնացնել այդ ժամանակաշրջանի հրապարակումների բովանդակային շեշտադրումները:

Ղարաբաղյան հիմնախնդիրը՝ վերակառուցման անվան տակ և հրապարակայնության սկզբունքով

Սկզբնական շրջանում Ղարաբաղյան հիմնախնդիրը ներկայացվում էր վերակառուցման քողի ներքո, ինչն արտահայտվում էր պաշտոնական լրահոսում, խորհրդային իշխանության ուղերձներում, կենտրոնական մամուլից արված արտատպումներում և այլն: «ՏԱՍՍ», «Նովոստի» և «Արմենպրես» լրատվական գործակալությունների հաղորդագրությունները մամուլի համար տեղեկատվության հիմնական աղբյուրներն էին: Խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր թերթերը («Գրական թերթ» 04.03.1988, «Հայրենիքի ձայն» 02.03.1988) տպագրում էին «ԼՂ-ի և նրա շուրջ ստեղծված իրադարձությունների կապակցությամբ» իշխանությունների ուղերձները (Մկրտիչյան 329), իսկ լրահոսը հաշվետվության էր նման և չէր արտացոլում իրական տրամադրությունները ստեղծված իրավիճակում: Այդուհանդերձ, ներկայացվող հրապարակումների կողքին մամուլը ժամանակ առ ժամանակ հարց էր բարձրացնում, թե ի վերջո՝ «Ո՞վ է խաղում կրակի հետ. Լեռնային Ղարաբաղի հայ ժողովո՞ւրդը, որ պահանջում է իր պրոբլեմի արդարացի լուծում, թե՞…» («Խորհրդային Հայաստան» 21.07.1989) ու նաև նկատում. ««Եկեք բարեկամություն անենք» կոչը հիմա պարզապես միամիտ է հնչում» (նույն տեղում), քանի որ «ազգային հարցում մակերես բարձրացած խորքային հարցերը պահանջում են շատ շրջահայաց, հեռատես, մտածված, նրբանկատ ու լուրջ մոտեցում»՝ («Երեկոյան Երևան» 15.04.1989), անգամ ստեղծված ճգնաժամից դուրս գալու համար՝ ի թիվս այլ կետերի՝ առաջարկելով «ազգային հարցի հիմքում դնել ազգերի ինքնորոշման իրավունքը» («Երեկոյան Երևան» 13.04.1989):

Հուսահատություն և հոգեբանական անկում

Զարգացող իրադարձությունները նոր փորձություն էին ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայաստանյան մամուլի համար: 1988թ. փետրվարի 27-29-ը Սումգայիթում իրականացվեց հայերի ջարդը, ինչը մամուլը «գաղտնի» պահեց ժողովրդից: Միայն ջարդերի երրորդ օրը ԽՍՀՄ պետական ռադիոյով և հեռուստատեսությամբ ելույթ

ունեցավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը և հայտնեց զանգվածային անկարգությունների մասին և ադրբեջանական ժողովրդին հանգստության կոչ արեց: Հայաստանում կատարվածի մասին տեղեկացան «ՏԱՍՍ»-ի մի քանի տողանոց հաղորդագրությունից («Գրական թերթ». 04.03.1988): Ամիսներ անց՝ հուլիսին, Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին տեղեկություններ հայտնվեցին ամերիկյան և եվրոպական մամուլում: Անգլիական հեղինակավոր «Գարդիան»-ը գրեց. «26 հայ է սպանվել, իսկ ադրբեջանական ոստիկանությունն այս ամենի համար ոչինչ չի արել»: Ֆրանսիական գրեթե բոլոր թերթերը նույնպես անդրադարձան Սումգայիթի իրադարձություններին և Երևանի փետրվարյան ցույցերին՝ նշելով վերջիններիս բացառիկ կիրթ բնույթը («Անկախություն». 1988):

«Ծայրաստիճան լարված և վերջին ժամանակներս խիստ սրվող» («Երեկոյան Երևան». 24.05.1989) հարցի՝ Լեռնային Ղարաբաղի մասին խոսելիս Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար Ս. Հարությունյանը ընդգծեց, որ «ԼՂԻՄ-ի պրոբլեմը տարածքային վեճ չէ, այն այսօր դարձել է համազգային գաղափար»՝ («Խորհրդային Հայաստան». 24.05.1989) հիշեցնելով, որ Սումգայիթի ողբերգությունը մի վերք էլ ավելացրեց 1915թ. ցեղասպանության մասին հայ ժողովրդի պատմական հիշողությանը:

Մամուլում սկսեցին հայտնվել հուսալքության նշաններ: Հոգեբանական անկումը հատկապես արտացոլվեց Սումգայիթյան ջարդերի («Հայաստան» 05-07.09.1990) ու դրան հաջորդած դատավարության, Սպիտակի երկրաշարժի, շարունակվող գործադուլների ու դասադուլների, հայտարարված պարետային ժամի, Արցախի շուրջ սեղմվող օղակի, քաղաքական հացադուլավորների և այլնի մասին հրապարակումներում:

Մամուլը շարունակում էր գրել ԼՂ-ի իրադրության մասին. հետաքրքրական մի առանձնահատկություն էր նկատվում, որ նախկինում չկար. Ստեփանակերտում փետրվարի 5-ի լարված դրության մասին տեղեկատվությունը հայտնվեց հաջորդ օրվա համարում: Նման օպերատիվությունը նորություն էր ժամանակի մամուլի համար («Խորհրդային Հայաստան». 06.02.1990): Թղթակցությունների կողքին գրեթե հավասարապես հայտնվեցին ռեպորտաժներ ոչ միայն Արցախից: Երևանի հիվանդանոցներում բուժվող բռնագաղթածների մասին ռեպորտաժները հետաքրքիր էին դարձնում թերթերի միապաղաղ ոճը: Թերթերում սկսում էին գործել հետևողականության և շարունակականության սկզբունքները: Ավելին՝ Արցախում և նրա շուրջը տիրող իրավիճակի մասին մտորումներ էին գրում ոչ միայն հայաստանյան («Ավանգարդ» 02.02.1990) և այլն), այլև օտարերկրյա լրագրողները («Ավանգարդ» 07.02.1990 ուկրաինացի լրագրող Վ. Դոլգանով):

Խնդրի լուծման հնարավոր դրական հեռանկարների տեսլական

Հոգեբանական անկումը մեղմելու, կյանքը բնականոն հուն վերադարձնելու ու դարձյալ խաղաղություն հաստատելու նպատակով մամուլը կոչերի և ուղերձների միջոցով փորձում էր լավատեսական տրամադրություններ հաղորդել ընթերցողներին («Ավանգարդ». 25.05.1989): Այս համատեքստում հատկապես ակնառու էին Հայաստանի և Ղարաբաղի մտավորականների ներդրած ջանքերը: Նրանք հաճախ էին հանդես գալիս մամուլի առաջին էջերում՝ ելույթներով, հրապարակախոսական հոդվածներով և բանաստեղծություններով՝ փորձելով հասարակությանը հույս և հավատ ներշնչել խնդրի շուտափույթ լուծման հնարավորության նկատմամբ: ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Էդգար Հովհաննիսյանը, գրողներ Վահագն Դավթյանը («Գրական թերթ». 25.03.1988), Ռազմիկ Դավոյանը («Գրական թերթ». 27.05.1988), Հրաչյա Մաթևոսյանը («Հայրենիքի ձայն». 14.12.1988), Ալվարդ Պետրոսյանը («Գարուն». N 6, 1988) և ուրիշներ շարունակ «սթափ դիրքորոշման», զսպվածության

ու խելամտության կոչեր էին հնչեցնում: Արցախյան հիմնախնդրին հետևողականորեն անդրադառնում էր «Ոզնի» հանդեսը, եթե ոչ հրապարակման միջոցով, ապա երգիծանկարային հանելուկի, երկտողի տեսքով, նաև՝ բանաստեղծությունների: «Ազգին անհապաղ պետք է Ղարաբաղ»,-ասում էր «Ոզնին» («Ոզնի», N 19, հոկտեմբեր 1988):

Թեև լուրերը հուսադրող չէին, բայց մամուլը ջանքեր էր գործադրում լավատեսություն, հույս ու հավատ ներշնչելու իր ընթերցողներին («Ավանգարդ». 27.01.1990):

Ազգային ինքնության վերարժևորում

Ղարաբաղյան շարժման մեկնարկին հաջորդող իրադարձությունները պահանջատեր հայության համար պայքարի նոր ուղղություններ էին ուրվագծում: Այս համատեքստում կարևոր ուղղություն էր որդեգրել մամուլը, որը, թեև դեռևս խորհրդային էր, բայց մեծ ջանքեր էր գործադրում իր հրապարակումներում «ազգայինի» վերահմաստավորման ուղղությամբ: Ազգայինն աստիճանաբար գերիշխող է դառնում կյանքի տարբեր ոլորտներում՝ սկսած մշակութապահպանումից մինչև պետական տոների և խորհրդանիշների վերականգնում, անցյալի հերոսների արժևորում, անգամ՝ հայոց լեզվի անաղարտության համար պայքար և այլն:

1989-ի ապրիլին արձանագրվեց առաջին զիջումը իշխանությունների կողմից՝ պայմանավորված Խորհրդային Միությունում ծայր առած ժողովրդական շարժման ալիքի ճնշման հետ: Իշխանությունները տեղի տվեցին և հանուն հայոց լեզվի անաղարտության և հայախոսության՝ շարժման մարտիկներն անդրանիկ հաղթանակն արձանագրեցին, երբ «սովետ» բառը փոխարինվեց «խորհուրդ» բառով (Եազըճեան 85): «Սովետ» ու նրանից կազմված «սովետական» և այլ բառերի փոխարեն սկսեցին գործածվել խորհուրդ, խորհրդային և այլ բառերը («Երեկոյան Երևան». 12.04.1989): Ուշագրավ էր այն փաստը, որ համազգային զարթոնքն ուղեկցվում էր մի հոսանքով՝ այն է՝ վերադարձ դասական ուղղագրությանը: Համազգային շարժման առաջին տարիներին շատ պարբերականներ լույս էին տեսնում հենց դասական ուղղագրությամբ*:

Մամուլում հայտնվեցին հրապարակումներ Արամ Մանուկյանի («Խորհրդային Հայաստան». 09.08.1989), Գարեգին Նժդեհի, Եղիշե Չարենցի, Արամ Երկանյանի, Հայոց ցեղասպանության («Խորհրդային Հայաստան». 15.04.1990), անգամ՝ 1920թ. ստորագրված Սևրի պայմանագրի մասին («Ավանգարդ». 03.12.1989): Որ պայքարը վճռական փուլ էր թևակոխել, շարժումն անշրջելի էր, իսկ մամուլի դերը բացառիկ կարևոր, վկայում էին ժանրային բազմազանությամբ և ինքնատիպ լուսանկարներով աչքի ընկնող համարները. բռունցքված ձեռքն ամենահաճախ հանդիպող լուսանկարներից էր («Ավանգարդ». 19.11.1989):

Իրավական պայքարի գործընթաց

Դեպքերի աննախադեպ սրընթաց զարգացումները փոխեցին նաև պայքարի ուղղությունը՝ այն է՝ խնդրի լուծմանը հասնել իրավական ճանապարհով: Արցախում կազմակերպվեց հանրաքվե, անցկացվեցին ընտրություններ, մարզը հռչակվեց հանրապետություն, ու մեկնարկեց անկախության երթը: Ավելին՝ պատերազմական գործողություններին զուգահեռ սկսվեց ԼՂՀ-ի՝ իբրև առանձին պետության ձևավորման և կայացման գործընթացը: Այս ժամանակաշրջանում Ղարաբաղ էին գալիս տարբեր պատվիրակություններ: Հարցին իրավական լուծում գտնելու

*Առաջինը դասական ուղղագրությունը որդեգրեց «Անկախություն»-ը՝ Ռ. Համբարձումյանի խմբագրության շրջանում (1988-1989թթ.):

նպատակով Ստեփանակերտ ժամանեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի անդամները, ովքեր հանդիպումների ընթացքում լսեցին Լեռնային Ղարաբաղի խնդրի ակունքների, 1988-ի փետրվարի 20-ին ընդունված որոշման մասին («Խորհրդային Հայաստան». 23.07.1989):

Իրավական առումով կարևոր քայլ էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 1-ի համատեղ նիստում ընդունած որոշումը, ըստ որի Լեռնային Ղարաբաղը վերամիավորվում էր Հայկական ԽՍՀ-ի հետ («Ավանգարդ» 03.12.1989):

1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) («Ավանգարդ». 05. 09. 1991) ստեղծումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց նոր փուլ: Ի պատասխան արցախցիների դրսևորած կամքի՝ ազերիները զանգվածային հարձակումներ իրականացրին: Ստեղծված նոր պայմաններում Ժելեզնովոդսկում ընդունվեց հայտարարություն, որով, փաստորեն, դրվեց Արցախի հիմնահարցը բանակցությունների միջոցով լուծելու գործընթացի սկիզբը (Արշակյան 202):

Դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության օրը, արցախահայությունը համաժողովրդական քվեով հաստատեց 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակված ԼՂՀ անկախությունը: Դեկտեմբերի 28-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրություններն անցան Ադրբեջանի պարտադրած պատերազմական գործողությունների պայմաններում:

Փաստորեն, ավարտվեց ևս մեկ տարի, փլուզվեց խորհրդային իշխանությունը, բայց Ղարաբաղի հիմնախնդիրը չլուծվեց: Միայն 1988թ. փետրվարից մինչև 1990-ի վերջը Արցախի խնդրի առնչությամբ ընդունվեց 7 միութենական որոշում (չհաշված այն բազմաթիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի պետական իշխանության ու կառավարման մարմինների կողմից), սակայն, «Ինքնավար մարզում և նրա շուրջը տիրող իրադրությունը ոչ միայն չնորմալացավ, այլև շարունակում էր վատանալ» ("Правда" 15.01.1990):

Մասնագիտական հիմնախնդիրներ և հաղթահարման ուղիներ

Մամուլի ազատականացման առաջին քայլերը խիստ զգուշավոր էին: Պատահական չէ, որ ընթերցողներն իրենց ցասումը խորհրդային զանգվածային լրատվամիջոցների հակահայկականության դեմ ժամանակ առ ժամանակ արտահայտում էին բողոքի տարբեր միջոցառումներով, որի ընթացքում հնչում էին իրենց մտահոգությունները մամուլի լրատվական քաղաքականության վերաբերյալ. «Օպերայի հիմնական մուտքի վերնամասում հայտնվեց այծի մի մեծ գծանկար. այծը «Մաա՛մուլ» էր մայում» («Կոմսոմոլեց». 13.10.1988, 2):

Մամուլը գիտակցում էր իր չիրագործած պարտավորությունը և խոստովանում. «Մեր հասարակության մասին ի՞նչ կասի գալիք ժամանակների պատմաբանը, երբ, պրպտումներ կատարելով 1988-ի թերթերի կույտերի մեջ, զարմանքով հայտնաբերի, որ Սումգայիթում տեղի ունեցածի առթիվ ցավակցության ու վրդովմունքի նամակներ կարելի է միայն անձնական արխիվներում գտնել: Ի՞նչ կասի այդ պատմաբանը, երբ իմանա, որ Սումգայիթից փախած հայերը, իրենք աղքատ դարձած, փող են փոխանցել Արզամասի երկաթուղային աղետը վերապրած մարդկանց համար, բայց որևէ մեկ թերթում զուր կփնտրի սումգայիթցիների օգնության ֆոնդի մասին հիշատակում» («Երեկոյան Երևան». 11.11.1988): Ըստ էության՝ արցախահայությունը ծանր օրեր էր ապրում, բայց միաժամանակ շարժումը մեծ թափով զարգանում էր, զուգահեռաբար ճաքեր էր տալիս Խորհրդային կայսրությունը՝ նաև ճանապարհ բացելով մամուլի նոր անունների համար:

Աղյուսակ 1. Հրապարակումների թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունների փոփոխությունները՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընթացքում

Ժամանակահատված	**Հիմնական թեմաներ**	**Մամուլի առանձնահատկություններ**
1985-1988 փետրվար . Վերակառուցման և հրապարակայնության սկզբնական փուլ	ԼՂ-ի մասին և իր շուրջը կատարվող իրադարձություններ	Պաշտոնական տեղեկատվություն կենտրոնական մամուլից արտատպումներ կուսակցական վերահսկողություն
1988 փետրվար – 1989. Ղարաբաղյան շարժման սկիզբ	շարժման մեկնարկ Սումգայիթ երկրաշարժ	ազգային թեմատիկ հրապարակումների աճ բազմակարծության դրսևորման փորձեր հուզական տոնայնություն ապատեղեկատվության տարրեր
1989-1990. ճգնաժամային իրադարձություններ, ազգային ինքնության վերարժևորում	բռնություններ, լարվածություն դատավարություններ ազգային ինքնության վերագնահատում	սոցիալական ու քաղաքական լարվածության վերարտադրում մամուլում քննադատական ոճի ավելացում
1990-1991. իրավական պայքարի գործընթաց, ԼՂՀ հռչակման լուսաբանում	իրավական գործընթացներ ԼՂՀ հռչակում հանրաքվե մասնագիտական հիմնախնդիրներ	մամուլի ազատականացում քաղաքական բազմակարծության աճ անկախ լրատվության փորձեր մասնագիտական դժվարությունների հաղթահարման ուղիներ

Այսպիսով՝ հայաստանյան մամուլը սկսեց ակտիվորեն անդրադառնալ Ղարաբաղյան շարժմանն ու դրա զարգացումներին 1991-ի գարնանը: Թե՛ հայկական, թե՛ ռուսական մամուլը որակական փոփոխություն կրեցին. մինչ այդ թերթերը Ղարաբաղյան շարժման մասին կա՛մ գրում էին բացասական լույսի ներքո, կա՛մ ոչինչ չէին գրում, անկախ մամուլ գոյություն չուներ: Փաստորեն, խորհրդային ապատեղեկատվությունը դարձավ նախադրյալ՝ ազատ մամուլի ստեղծման համար:

Եզրահանգումներ

Ամփոփելով խորհրդային վերջին տարիներին հայաստանյան մամուլի գործունեության և հրապարակումների բովանդակային ուսումնասիրությունը՝ կարող ենք ասել, որ Ղարաբաղի ձգձգվող հիմնահարցի քաղաքական լուծումը պահանջում էր համարժեք արձագանք ժամանակի մամուլում, ինչը խորհրդային գաղափարախոսության պայմաններում լիարժեք չէր իրականացվում: Արդյունքում՝ մի կողմից փաստերն ու իրականությունը լռության էին մատնվում, մյուս կողմից՝ որոշակի փաստերի քողարկմամբ տարածվում էր կես-ճշմարտությունը: Այդ առումով մամուլի բովանդակային շեշտադրումները չէին կարող ազդեցություն չունենալ հանրության վրա: Փոխարենը ,գործող ՁԼՄ-ներին զուգահեռ, որոնք գտնվում էին գաղափարական մեկ դաշտում, աստիճանաբար ստեղծվեցին նոր լրատվամիջոցներ: Հարկ է նկատել, որ մամուլը տեղեկատվության հիմնական աղբյուր էր, որին վերապահված էր և՛ տեղեկացնողի, և՛ վերլուծողի դերը: Հայաստանի կուսակցական մամուլի հարաբերական միապաղաղ բնույթին հաջորդեց ազատ մամուլի ծնունդը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արշակյան, Անդրանիկ. *Արցախյան գոյապայքար (1985-1992).* Երևան, 2004:
2. Եազըճեան, Գևորգ. *Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը.* Անթիլիաս, 2004:
3. Մկրտիչյան, Աննա. «Հայաստանյան մամուլի հրապարակումների արցախյան շեշտադրումները խորհրդային ապատեղեկատվության համատեքստում (1988-1991թթ.)». *Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու*, Երևան, 2017, էջ 329:
4. «Անկախություն». 1988թ., Երևան:
5. «Ավանգարդ». 25 մայիսի, 1989թ. , Երևան; «Ավանգարդ». 2 փետրվարի, 1990թ., Երևան; «Ավանգարդ». 7 փետրվարի, 1990թ., Երևան; «Ավանգարդ». 3 դեկտեմբերի, 1989 թ., Երևան; «Ավանգարդ». 19 նոյեմբերի, 1989թ., Երևան; «Ավանգարդ». 3 դեկտեմբերի, 1989թ., Երևան; «Ավանգարդ». 27 հունվարի, 1990թ., Երևան; «Ավանգարդ». 5 սեպտեմբերի, 1991թ., Երևան:
6. «Գարուն». N 6, 1988թ., Երևան:
7. «Գրական թերթ». 4 մարտի, 1988թ., Երևան; «Գրական թերթ». 4 մարտի, 1988թ., Երևան; «Գրական թերթ». 25 մարտի, 1988թ., Երևան; «Գրական թերթ». 27 մայիսի, 1988թ., Երևան:
8. «Երեկոյան Երևան». 15 ապրիլի, 1989թ., Երևան; «Երեկոյան Երևան». 13 ապրիլի, 1989թ., Երևան; «Երեկոյան Երևան». 24 մայիսի, 1989թ., Երևան; «Երեկոյան Երևան». 11 նոյեմբերի, 1988թ., Երևան; «Երեկոյան Երևան». 12 ապրիլի, 1989թ., Երևան:
9. «Խորհրդային Հայաստան». 24 մայիսի, 1989թ., Երևան; «Խորհրդային Հայաստան». 21 հուլիսի, 1989թ., Երևան; «Խորհրդային Հայաստան». 9 օգոստոսի, 1989թ., Երևան; «Խորհրդային Հայաստան». 15 ապրիլի, 1990թ., Երևան; «Խորհրդային Հայաստան». 23 հուլիսի, 1989թ., Երևան; «Խորհրդային Հայաստան», 6 փետրվարի, 1990թ., Երևան:
10. «Հայաստան». 5-6-7 սեպտեմբերի, 1990թ., Երևան
11. «Հայրենիքի ձայն». 14 դեկտեմբերի, 1988թ., Երևան; «Հայրենիքի ձայն». 2 մարտի, 1988թ., Երևան:
12. «Ոզնի». N 19, հոկտեմբեր, 1988թ., Երևան:
13. «Комсомолец». 13 հոկտեմբերի, 1988թ. , Մոսկվա:
14. «Правда», 15 հունվարի, 1990թ., Մոսկվա:

WORKS CITED

1. Arshakyan, Andranik. *Arts'akhyan goyapayk'ar* [*War for existing in Artsakh*] *(1985-1992t't'.).* Erevan. Yerevan, 2004. (In Armenian)\
2. Mkrtichyan, Anna. *«Hayastanyan mamuli hraparakumneri arts'akhyan sheshtadrumnery Khorhrdayin apateghekatvut'yan hamatek'stum (1988-1997t't'.)» [Artsakh Accents of Armenian Press Publications in the Context of Soviet Disinformation (1988-1991).]. Mesrop Mashtots' hamalsarani Lratu, Erevan, ej 329,* 2017. (In Armenian)
3. Yazicjian, Gevorg. *Hayastani 1985-1991t't'. parberakan mamuly The Armenian Periodical Press of 1985-1991*]. Antilias. [2004. (In Armenian)
4. «*Ankakhut'yun*» ["Independence"]. 1988t'. Erevan. (In Armenian)
5. *«Avangard», 25 mayisi, 1989t'. , Yerevan; «Avangard», 2 p'etrvari, 1990t'., Yerevan; «Avangard», 7 p'etrvari, 1990t'., Yerevan; «Avangard», 3 dektemberi, 1989 t'., Yerevan; «Avangard», 19 noyemberi, 1989t'., Yerevan; «Avangard», 3 dektemberi, 1989t'., Yerevan; «Avangard», 27 hunvari, 1990t'., Yerevan; «Avangard», 5 septemberi, 1991t'., Yerevan.* ["Avangard", May 25, 1989, Yerevan; "Avangard", February 2, 1990, Yerevan; "Avangard", February 7, 1990, Yerevan; "Avangard", December 3, 1989, Yerevan; "Avangard", November 19, 1989, Yerevan; "Avangard", December 3, 1989, Yerevan; "Avangard", January 27, 1990, Yerevan; "Avangard", September 5, 1991, Yerevan.] (In Armenian)
6. *«Garun»* ["Spring"]*, N 6, 1988t'.,* Erevan.. (In Armenian)
7. *«Grakan t'ert'», 4 marti, 1988t'., Yerevan; «Grakan t'ert'», 4 marti, 1988t'., Yerevan; «Grakan t'ert'», 25 marti, 1988t'., Yerevan; «Grakan t'ert'», 27 mayisi, 1988t'., Erevan.* ["Literary Newspaper", March 4, 1988, Yerevan; "Literary Newspaper", March 4, 1988, Yerevan; "Literary Newspaper", March 25, 1988, Yerevan; "Literary Newspaper", May 27, 1988, Yerevan.]. (In Armenian)
8. *«Hayastan»* ["Armenia"]*, 5-6-7 septemberi, 1990t'.,* Erevan.. (In Armenian)
9. *«Hayrenik'i dzayn», 14 dektemberi, 1988t'., Yerevan; «Hayrenik'i dzayn», 2 marti, 1988t'., Erevan.* ["Voice of the Homeland", December 14, 1988, Yerevan; "Voice of the Homeland", March 2, 1988, Yerevan.]. (In Armenian)
10. *«Khorhrdayin Hayastan», 24 mayisi, 1989t'., Yerevan; «Khorhrdayin Hayastan», 21 hulisi, 1989t'., Yerevan; «Khorhrdayin Hayastan», 9 ogostosi, 1989t'., Yerevan; «Khorhrdayin Hayastan», 15 aprili, 1990t'., Yerevan; «Khorhrdayin Hayastan», 23 hulisi, 1989t'., Yerevan; «Khorhrdayin Hayastan», 6 p'etrvari, 1990t'., Yerevan.* ["Soviet Armenia", May 24, 1989, Yerevan; "Soviet Armenia", July 21, 1989, Yerevan; "Soviet Armenia", August 9, 1989, Yerevan; "Soviet Armenia", April 15, 1990, Yerevan; "Soviet Armenia", July 23, 1989, Yerevan; "Soviet Armenia", February 6, 1990, Yerevan.]. (In Armenian)
11. *«Vozni»* ["Hedgehog"]*, N 19, hoktember, 1988t'., Yerevan.*. (In Armenian)
12. *«Yerekoyan Yerevan», 15 aprili, 1989t'., Yerevan; «Yerekoyan Yerevan», 13 aprili, 1989t'., Yerevan; «Yerekoyan Yerevan», 24 mayisi, 1989t'., Yerevan; «Yerekoyan Yerevan», 11 noyemberi, 1988t'., Yerevan; «Yerekoyan Yerevan», 12 aprili, 1989t'.,* Erevan.. ["Evening Yerevan", April 15, 1989, Yerevan; "Evening Yerevan", April 13, 1989, Yerevan; "Evening Yerevan", May 24, 1989, Yerevan; "Evening Yerevan", November 11, 1988, Yerevan; "Evening Yerevan", April 12, 1989, Yerevan.]. (In Armenian)
13. *"Komsomolec"* ["Komsomolets"]*, 13 hoktemberi, 1988t'. , Moskva.* (In Russian)
14. *"Pravda"* ["Truth"]*, 15 hunvari, 1990t'., Moskva*. (In Russian)

THE CONTENT PRIORITIES AND ROLE OF THE ARMENIAN PRESS IN SHAPING THE PUBLIC VALUE-IDEOLOGICAL SPHERE IN THE CONTEXT OF THE KARABAKH MOVEMENT (1988-1991)

ANNA MKRTICHYAN
Yerevan State University, Faculty of Jounralism, Chair of New Media and Communication, Ph.D. in Philology, Lecturer,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to present the content priorities of Armenian press publications during the final years of the Soviet era, the specific characteristics of journalistic work and the role of the press in uniting readers and shaping the ideological sphere in the framework of the Karabakh Movement. The current situation of Karabakh make it more imperative to examine the origins of the problem and to study the Armenian press of that period as national issues were voiced not only on the squares and halls but also in the press. During the Soviet years, the Armenian press was unable to fully and objectively present the reality due to strict censorship.

To achieve the research objective, we have set forth the following tasks: to examine and reinterpret, based on press publications, the Karabakh Movement, the national struggle for survival and the preconditions for the establishment of the Nagorno-Karabakh Republic (NKR), coverage features as well as the emergence of an independent press. Several publications are being incorporated into scientific discourse for the first time.

The research is conducted using analytical, historical-critical, and historical-comparative methods, alongside the principles of journalistic analysis.

The main conclusion is that the Karabakh Movement, the declarations of independence by Armenia and Nagorno-Karabakh, the collapse of the Soviet Union and the war did not create favorable conditions for the Armenian media. Nevertheless, despite the prevailing challenges, the Armenian press – seeking to overcome multiple professional obstacles – remained focused on the Karabakh movement and played a crucial role in uniting the public and shaping the value-based sphere.

Keywords: *press, Armenian press, Karabakh, Karabakh movement, Artsakh, Karabakh issue, struggle, disinformation, free press.*

СОДЕРЖАТЕЛЬНЫЕ АКЦЕНТЫ И РОЛЬ АРМЯНСКОЙ ПРЕССЫ В ФОРМИРОВАНИИ ЦЕННОСТНО-ИДЕОЛОГИЧЕСКОГО ПОЛЯ ОБЩЕСТВА В КОНТЕКСТЕ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ (1988-1991 ГГ.)

АННА МКРТИЧЯН
преподаватель кафедры новых медиа и коммуникации
факультета журналистики Ереванского государственного университета,
кандидат филологических наук,
г. Ереван, Республика Армения

Цель статьи – представить содержательные приоритеты публикаций армянской прессы в последние годы существования Советского Союза, особенности журналистской деятельности, роль прессы в объединении читателей и формировании идеологического поля на примере Карабахского движения. Современное состояние проблемы и сложившаяся ситутация вынуждают

тщательно изучать её истоки и исследовать публикации, поскольку общенациональные вопросы поднимались не только на площадях, но и на страницах прессы. В советские годы армянская пресса не имела возможности полноценно и объективно представлять реальность из-за действовавшей цензуры.

Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: на основе публикаций изучить и переосмыслить Карабахское движение, национально-освободительную борьбу и предпосылки создания Нагорно-Карабахской Республики (НКР), особенности освещения, а также зарождение независимой прессы. Ряд публикаций вводится в научный оборот впервые.

Исследование основано на использовании аналитического, историко-критического и историко-сравнительного методов, также принципов журналистского анализа.

Основной вывод заключается в том, что Карабахское движение, провозглашение независимости Армении и Нагорного Карабаха, распад Советского Союза и навязанная война не способствовали созданию благоприятных условий для армянского медиапространства. Несмотря на сложившуюся ситуацию, пресса, преодолевая многочисленные профессиональные вызовы, оставалась сосредоточенной на Карабахском движении и играла важную роль в консолидации общества и формировании ценностного поля.

Ключевые слова: *пресса, армянская пресса, Карабах, Карабахское движение, Арцах, карабахский конфликт, борьба, дезинформация, свободная пресса.*